

## Սակագների վերաբերյալ

Ընկերության՝ ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված պարտավորությունների կատարման շրջանակում քաղվածքները և տեղեկանքները տրամադրվում են անվճար՝ համապատասխան իրավական ակտերով սահմանված ժամկետներում և կարգով, իսկ այլ փաստաթղթերի և տեղեկատվության համար սահմանված են հետևյալ սակագները.

Ընկերության կողմից իր պարտավորությունների շրջանակում տրամադրված տեղեկանքների, արգելանքից ազատման գրությունների, լիազորագրերի կրկնօրինակների կամ կրկնակի տրամադրում- 5'000(հինգ հազար) ՀՀ դրամ,

Ընկերության Հաճախորդների կողմից ցանկացած այլ բովանդակությամբ պահանջվող տեղեկանքի տրամադրում-3'000(երեք հազար) ՀՀ դրամ:

## Հաղորդակցման վերաբերյալ

ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՅՈՒՄԸ ԱՄԵՆԱՅԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ԱՐԱՎԵԼ ՀԱՍԱՆԵԼԻ Է, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՄՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՐՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

## Փաստաթղթեր պահանջելու վերաբերյալ

Ընկերությունը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից «ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ սպառողին: